ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ **2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ»

Կատարող՝ Լորետա Խաչատրյան

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Ուսումնական հաստատություն՝ Հրազդանի Հ. Պարոնյանի անվան թիվ **12** հիմն. դպրոց

ՀՐԱԶԴԱՆ **2023**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Գրականության ակնարկ

4 Գործնական համատեքստ 14

Ամփոփում 19

Գրականություն 21

Նախաբան

Միջառարկայական ուսուցումը կապակցված խոսքի զարգացման հիմնական միջոցն է, քանի որ ապահովում է բառապաշարի բազմակողմանի հարստացումը: Փոխկապակցված դասերը ոգեշնչում են աշակերտներին, քանի որ նրանք հասկանում են, որ մի առարկայի գիտելիքը խթան է հանդիսանում մյուս առարկայի համար, և դրանք էլ նպաստում են կյանքում ավելի գիտակցված
ապրելուն:

Սույն աշխատանքում նպատակադրվել եմ ավանդական և ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների կիրառմամբ օժանդակել և նպաստել աշակերտների բառապաշարի հարստացմանը՝ զարգացնելով աշակերտների գրավոր և բանավոր խոսքը:

Հետազոտական մեթոդներից օգտվել եմ տեսական–հետազոտական և գործնական– հետազոտական մեթոդներից: Տեսական—հետազոտական մեթոդների շրջանակում կատարել եմ առանձին տեսությունների ընտրություն, համադրում և համակարգում՝ առաջնորդվելով Ջ. Դյուիի «Դպրոցը և հասարակությունը» աշխատությամբ, նաև ուսուցիչների համար նախատեսված ուսումնական ձեռնարկներով:

Աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման գործում կարևոր է գիտելիքների, մտավոր կարողությունների դերը, որը, սակայն, բավարար չէ լիարժեք կյանք ունենալու համար: Հենց այստեղ է կարևորվում գործնականում կողմնորոշվելու, գիտելիքը ինչպես ստանդարտ, այնպես էլ ոչ ստանդարտ իրավիճակներում կիրառելու խնդիրը, որը սովորողները կարող են ձեռք բերել միայն ինքնուրույնություն ձեռք բերելու շնորհիվ: Այս հիմունքով է պայմանավորված ուսուցման գործընթացի կարևորագույն խնդիրներից մեկը՝ սովորողների ինքնուրույն ճանաչողական և ստեղծագործական ունակությունների զարգացումը:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունն էապես պայմանավորված է դասավանդման մեթոդիկայով: Անհրաժեշտ է ուսումնական գործընթացում ներդնել այնպիսի մեթոդներ, հնարներ, միջոցներ, որոնք կխթանեն սովորողի ինքնուրույն և ստեղծագործական ունակությունների զարգացումը, դասը կդարձնեն առավել
հետաքրքիր:

Ուսուցման գործընթացին բնորոշ է կառավարվող լինելու հանգամանքը, և բնական է, որ ակտիվ ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել անհատի առանձնահատկությունները, այսինքն՝ յուրաքանչյուր աշակերտի մտածողության, հիշողության, նույնիսկ առանձին զգայարանների (տեսողություն, լսողություն) առանձնահատկությունները, ինչպես նաև բնավորությունն ու կամքը:

Վերջին տասնամյակում ուսուցման բնույթի փոփոխությունները տեղի են ունենում գլոբալ կրթության միտումների համատեքստում, որոնք ստացել են «մեգա միտումներ» անվանումը[1]:

ՀՀ-ում ժամանակակից դպրոցն իր ուսումնառության գործընթացը կազմակերպում է համաշխարհային դպրոցի փորձի ու նոր ձեռքբերումների հիման վրա: Գրականության ակնարկ:

Ավանդական ուսուցման առաջավոր մեթոդների ու հնարների կողքին գործածության ոլորտ են բերվում արդիականն ու ժամանակակիցը: Անհնար է պատկերացնել այս գործընթացն առանց ուսուցչի ու նրա աշխատանքի վերակառուցման և կատարելագործման: Օրախնդիր հարց է, թե կրթական բարեփոխումների արդի պայմաններում ուսուցիչը որքանով է պատրաստ ուսուցման մարտավարությունների և նոր մեթոդների ընտրությանն ու կիրառմանը: Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում: Դպրոցի միջին դասարաններում միշտ էլ մեթոդական հիմնախնդիր է եղել միջառարկայական կապերի կիրառումը: Միջին դասարաններում ընթերցարանության դասերի ընթացքում պահանջվում է նյութից բխող ինտեգրում նույն դասարաններում ուսումնասիրվող այլ առարկաների միջև՝ «Երաժշտություն», «Տեխնոլոգիա», «Մաթեմատիկա» և այն: Միջին դասարանների «Մայրենի» դասագրքերը կազմված են հենց ինտեգրման սկզբունքով, որի պահանջն է իրականացնել հայոց լեզվի և գրականության գործնական ուսուցումը ընթերցարանության միջոցով:

«Մայրենի» առարկայի գլխավոր առանձնահատկությունը գործնական ուղղվածությունն է: Այդ նպատակադրումը պահանջ է ներկայացնում ուսուցման բովանդակության մեջ առանձնահատուկ տեղ տալու բառի ուղղախոսական և ուղղագրական կանոնների ճիշտ կիրառմանը, բառին ու նրա իմաստին,

[1] Մարգարյան Ս., Ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման մասին, «Մանկավարժ», 5-2010, էջ 176:

բառօգտագործմանը, բառերի իմաստային ու էերականական կապակցելիությանը, բառերի փոխաբերական կիրառությանը, նախադասությունների կառուցման մեջ բառերի բառաձևերի դերին: Սա նպաստելու է ինչպես կապակցված խոսք կազմելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, այնպես էլ սովորողների ճանաչողական կարողությունների, աշխարհընկալման, տրամաբանական մտածողության զարգացմանը, իմացական դաշտի ընդլայնմանը[2]:

Միջին դասարանների առաջին աստիճանում միջառարկայական դասերը հիմնականում պտտվում են «Մայրենի» առարկայի առանցքի շուրջ՝ «Մայրենի – Տեխնոլոգիա», «Մայրենի – Մաթեմատիկա», «Մայրենի – Երաժշտություն» և «Մայրենի – Կերպարվեստ» և այլ զուգահեռներով, որոնք կարող են նաև վերածվել եռակողմ և քառակողմ դասերի:

Երկրորդ աստիճանում միջառարկայական դասերը հիմնականում պտտվում են «Հայոց լեզու» առարկայի առանցքի շուրջ՝ «Հայոց լեզու – Ֆիզիկա», «Հայոց լեզու – Քիմիա», «Հայոց լեզու – Պատմություն» և այլ զուգահեռներով, որոնք նույնպես կարող են նաև վերածվել եռակողմ և քառակողմ դասերի:

Միջառարկայական կապերը միջին դասարանների ուսումնական առարկաների հասկացությունները, տեղեկությունները ու փաստերը այն դիալեկտիկական կապերի իրականացումն են ուսուցման գործընթացում, որոնք առօրյա կյանքում գործում են մարդկանց շրջապատող աշխարհում և ճանաչվում են ժամանակակից գիտությունների, մասնավորապես հոգեբանամանկավարժական գիտության կողմից:

Միջառարկայական ուսուցում ասելով՝ նկատառվում է իմաստով և ձևով միմյանց լրացնող, տարբեր առարկաների և ուսումնական նյութերի միասնական ամբողջությունը, որը երկու դասընթացների խաչմերուկ է, որին հետևում է վերելքը, ապա գագաթը՝ նպատակային դասը: Միջառարկայական կապերը պետք է նպատակաուղղված լինեն օբյեկտիվ աշխարհի բաղկացուցիչ մասերի առամիասնությանը՝ «բնություն–մարդ–հասարակություն» հասկացության ըմբռնմանը:

Ուսուցումը և գիտելիքի յուրացումը պետք է իրականացնել ակտիվ հենքի վրա: Ջ. Դյուիի այն դրույթը, թե պետք է երեխաներին օգնել գիտելիքը ակտիվորեն յուրացնելու և

[2] Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2007, էջ 320:

ոչ թե նրան դարձնել պասիվ ընդունող, պատկերավոր ձևակերպել է Գ. Քոմենջերը.

«Երեխան անոթ չէ, որը պետք է լցնել, այլ ջահ, որը պետք է վառել» [3]: Ուստի ուսումնական ծրագիրը չպիտի լինի անփոփոխ, այլ հասարակականմշակութային ոլորտներում շարժումները աղբյուր և խթան պետք է դառնան անընդհատ ընտրության և կրթության բովանդակության փոփոխության համար:

Ուսուցչին պիտի տալ ստեղծագործելու հնարավորություն, իսկ աշակերտի մոտ զարգացնել քննադատական մտածողություն, տրամաբանություն և ինքնուրույն բացահայտելու ձգտում[4]:

Իտալացի մանկագիր Ջանի Ռոդարին «Ստեղծագործական երևակայության քերականություն» գրքում մեջբերում է անում Նովալիսից. «Եթե ֆանտազիային այնպես տիրապետեինք, ինչպես տրամաբանությանը, հորինելու արվեստը կբացահայտվեր»[5]:

Եթե աշակերտի հետ աշխատելիս շեշտադրենք նրա երևակայության զարգացումը, ապշեցուցիչ գյուտերի կհանդիպենք, քանի որ նա ինքն է հաճախ զարմանում, թե ինչպես ծնվեց բառերով արտահայտված այդպիսի պատկեր: «Սովորող – սովորող», «ուսուցիչ – սովորող» համագործակցության, միասին երևակայելու և պատկերացնելու արդյունքում ծնունդ են առնում հեքիաթներ, պատմություններ, որոնք թաքնված են մարդու ենթագիտակցության խորքում: Սա հեքիաթի և իրականության հանդիպումն է՝ բառերի կերպարանք առած:

Մայրենիի ուսուցումը դպրոցական ամենադժվար աշխատանքներից մեկն է դառնում, երբ չկան կենդանի հետաքրքրություն առաջացնող առարկաներ, երբ լեզուն միայն դասերը կրկնելու միջոց է: Նույն կերպ անդրադառնալով ուսուցման ոլորտին՝ պետք է ճշել, որ ուսուցչի կոչումն է «ժանգեր քերելով» աշակերտների սեփականությունը դարձնել գիտելիքների քնած պաշարը[6]:

Ուսումնական ծրագրերի ինտեգրման նպատակը աշակերտների առաջադիմության մակարդակի բարձրացումն է: Ինտեգրված ուսուցում կազմակերպելու անհրաժեշտության վերաբերյալ 1900 թ. «Դպրոցը և հասարակությունը» աշխատության մեջ անդրադարձել է Ջոն Դյուին՝ ճշելով. «Բոլոր գիտություններն սկիզբ

---

[3] Դյուի Ջ., Դպրոցն ու հասարակությունը, Երևան, 2013, էջ 76:

[4] Նույն տեղում, էջ 72:

[5] Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995, էջ 8:

[6] Դյուի Ջ., Դպրոցն ու հասարակությունը, Երևան, 2013, էջ 60:

են առնում մեր միակ մոլորակի և մեր ապրած միակ կյանքի պահանջներից: Մենք չունենք շերտավորված երկրագունդ, որի մի շերտը մաթեմատիկական, մյուսը՝ ֆիզիկական, մեկ ուրիշը պատմական բնույթ ունենա և այսպես շարունակ»[7]:

Ինտեգրված ուսուցման ծրագիր կազմելիս տարբեր առարկաների գիտելիքներ հիմնվում են մեկ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Պետք է հիշել, որ ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ինտեգրման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերվում են միավորված (ինտեգրված) ծրագրի հետևյալ տեսակները.

- միջառարկայական (interdisciplinary),
- բազմառարկայական (multidisciplinary),
- անդրառարկայական (trans disciplinary)[8]:

Միջառարկայական ուսուցումը դասի հատուկ տեսակ է, որն ներառում, միավորում է մեկ հասկացություն ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցում: Միջին դասարաններում ուսուցանվող «Մաթեմատիկա»,
«Մայրենի» և մյուս առարկաների միջև փոխադարձաբար օգտագործվող միջառարկայական կապերը պետք է դիտել որպես անժխտելի դիդակտիկական պայման: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանը և հարստացմանը: Կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները:

Միջառարկայական դասը դասի առավել ակտիվ ձև է, որի ընթացքում աշակերտը ձեռք է բերում.

- հոգատարություն շրջապատի նկատմամբ,

---

[7] Նույն տեղում, էջ 62:

[8] Մարգարյան Ս., Ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման մասին, Մանկավարժ, 5-2010, էջ 165:

- թիմում աշխատելու կարողություն,
- ինքնուրույնություն,
- բարդ իրավիճակում կողմնորոշվելու կարողություններ,
- վերլուծական, դատողական կարողություններ, խոսքը ճիշտ ձևակերպելու հմտություն [9]:

Միջառարկայական դասի ժամանակ մեկ թեմայի շուրջ տարվող քննարկումները, զրույցը, խաղերն ու վարժությունները աշակերտին օգնում են լինել ակտիվ, զգոն, ուշադիր և ամենակարևորը՝ բացահայտող: Պարբերաբար անցկացվող միջառարկայական դասերն առավելապես նպաստում են աշակերտի խոսքի զարգացմանը՝ ձևավորելով համեմատելու, ընդհանրացնելու և եզրակացնելու կարողություններ:

Ժամանակակից ինտեգրված դասին ներկայացվող պահանջներն են՝

- նոր մեթոդների կիրառում,
- փոխազդեցություն, փոխուսուցում,
- աշակերտի ակտիվություն,
- համագործակցություն,
- ինքնաարտահայտման խրախուսում,
- հետադարձ կապ:

Կապակցված խոսքի զարգացումը տեղի է ունենում աստիճանաբար, մտածողության զարգացման հետ շփման ձևերի բարդության հետ:

Լեզվի թե՛ բանավոր, թե՛ գրավոր դրսևորումները կոչվում են խոսք, որը, ըստ էության, լեզվի կիրառությունն է գործնականում: Խոսքը մտածողության արգասիք է: Յուրաքանչյուր լեզու ունի իր արտասանությունը, որը ձեռք է բերվում և կուտակվում

[9] Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա. և այլք, Ինտեգրված թեմատիկ միավորներ, Երևան, 2003, 256 էջ:

հասարակության զարգացման ընթացքում: Լեզուն յուրաքանչյուր ժողովրդի ազգային գիտակցության արտահայտման ձևն է: Հանրակրթության համակարգում լեզուն առանձնահատուկ տեղ ունի մի կողմից՝ որպես աշխարհահանաչողության, անձի ձևավորման, նրա մտավոր առաջընթացի, հոգեբանական կարգերի, ուշադրության, հիշողության, երևակայության, տրամաբանական և պատկերավոր մտածողության հիմնական միջոց, մյուս կողմից՝ որպես ուսումնական մնացած բոլոր առարկաների ընկալման և յուրացման նախադրյալ: Մայրենի լեզվով տարբեր ոճերի բնագրերի գիտակցական ընթերցումը և միտքը ազատորեն շարադրելու կարողությունը նպաստում են մյուս առարկաների ընկալման յուրացմանն ու նպատակային վերարտադրմանը[10]:

Աշակերտը մայրենի լեզվի կրողն է, լավ թե վատ, ճիշտ թե սխալ անընդհատ հաղորդակցվում է, ճանաչում է իրեն, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Մայրենիի ուսումնառությունը կատարվում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխան ծնված օրից արդեն կրում է մայրենի լեզուն: Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել աշակերտին գրավոր և բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները: Մայրենի լեզվի ուսուցումը որպես ուսուցման հիմնական լեզու անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ: Այն պետք է նպաստի սովորողի ինքնաարտահայտմանը, ինքնադրսևորմանը: Որքան զարգացած է մարդու մտածողությունը, այնքան գրագետ է կառուցվում նրա խոսքը, և որքան զարգացած է մարդու խոսքը, այնքան զարգացած է նրա մտածողությունը:

Աշակերտների բառապաշարի հարստացումն սկսում է նրանց ուսումնառության առաջին իսկ տարվա սկզբից: Եվ արդեն միջին դասարաններում թե՛ հայոց լեզվի, թե՛ մյուս առարկաների դասընթացների շնորհիվ զգալի չափով մշակվում ու հարստանում է նրանց բառապաշարը:

Աշակերտի բառապաշարը այստեղից–այնտեղից ընկած բառերի սոսկ քանակական գումար չէ: Բառերը աշակերտի ուղեղում որոշակիորեն համակարգված են իրենց իմաստային կողմով, կիրառական, կազմության և այլ հատկանիշներով:

---

[10] Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ, 2011, 3:

Աշակերտների բառապաշարի վրա տարվող աշխատանքը չպետք է սահմանափակվի նրանց իմացած բառերի քանակի սոսկ մեծացումով: Այդ աշխատանքը պետք է տանել՝ ապահովելով հետևյալ պահանջները.

- աշակերտների բառապաշարի ոչ միայն քերականական, այլև որակական կազմի հարստացում,
- բառերի դիպուկ գործածություն,
- բառապաշարի մաքրություն[11]:

Ինչպես բառապաշարի հարստացման, այնպես էլ լեզվական օրինաչափությունների ուսումնասիրման համար մայրենի լեզվի ծրագրերն ու դասագրքերը առաջարկում են որոշակի համակարգ և ուսուցիչները հստակորեն պատկերացնում են, թե որ դասարանում ինչ գիտելիքներ են ուսուցանվում, ինչ հաջորդականությամբ, ինչ խորությամբ ու ծավալով[12]:

Լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց, արտահայտում է իրականության բոլոր կողմերը: Ուստի մայրենի լեզուն կապված է բոլոր առարկաների ուսուցման հետ: Մայրենի լեզվի դասավանդումը յուրահատուկ բնույթ ունի հատկապես միջին դպրոցում:

Մայրենիի դասընթացը ոչ միայն լեզվական, այլև ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոց է, քանի դեռ սովորողները չեն անցնում առանձին մասնագիտական առարկաներ: Հետևաբար ընթերցարանության նյութերը սովորողների լեզվաբերականական գիտելիքների ու լեզվամտածողության կարողությունների, լեզվական ու գրական ճաշակի զարգացմանը զուգընթաց պետք է ապահովեն նաև բնության, մարդու և հասարակական կյանքի մասին, տարիքին և կրթության մակարդակին համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերում:

Դա նշանակում է, որ անհրաժեշտ է աշակերտին փոխանցել լեզվական բավարար գիտելիքներ, ձևավորել նրանց խոսքային կարողությունները, գինել բանավոր և գրավոր խոսքի հմտություններով: Այդ նպատակին հասնելու համար

[11] Աբրահամյան Ս., Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան, 1973, 13 էջ:

[12] Աթալյան Հ., Կապակցված խոսքի ուսուցման համակարգը,Երևան,1986, 33:

խիստ կարևոր է մայրենիի դասավանդման գործընթացը հագեցնել տեսական գիտելիքները կյանքին զուգակցելուն միտված գործողություններով: Գործնական կարողությունների ձևավորումը հիմնականում իրականացվում է միջառարկայական կապերի հաստատման միջոցով:

Աշակերտների կրթության ու դաստիարակության հարցում ուսուցման համակարգված մոտեցման համընդհանուր գիտակցության առկայությամբ հանդերձ հաստատված չէ միջառարկայական կապերի ամբողջ համակարգը, դպրոցական տարբեր առարկաներում արտացոլված չէ միջառարկայական կառուցվածքը և որոշված չեն դրանց առանձնահատկությունները:

Մայրենիի դերը՝ որպես այլ առարկաների դասավանդման միջոց պայմանավորված է նրա դիդակտիկական նպատակներով: Հայտնի է, որ մայրենի լեզուն կապված է բոլոր առարկաների ուսուցման հետ[13]:

Միջառարկայական կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս միևնույն առարկայի կամ երևույթի մասին տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ: Տարբեր առարկաներից աշակերտների ձեռք բերած գիտելիքները պետք է դիտվեն փոխադարձ կապերի մեջ, իսկ դա կարող է ապահովել միջառարկայական կապերի շնորհիվ: Դրանցով են համակարգվում աշակերտների գիտելիքները, դրանք նպաստում են, որ աշակերտները միևույն երևույթը դիտարկեն տարբեր տեսանկյուններից, ընդհանրացնող եզրակացություններ անեն:

Միջառարկայական կապերի օգտագործումն իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ յուրաքանչյուր առանձին նյութի ուսումնասիրության ընթացքում:

Միջառարկայական և ներառարկայական կապերի հաստատումը միջին դասարաններում դասավանդող ուսուցչի աշխատանքային գործունեության անբաժանելի մասն է: Դա սկսվում է ուսուցչի կողմից դասը պլանավորելուց և շարունակվում է «ուսուցիչ – աշակերտ» հարաբերության բոլոր փուլերում:

---

[13] Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ, 2011, 4:

Ըստ Շ. Գանելինի «... լեզուն հաղորդակցման միջոց է, և այն արտահայտում է իրականության բոլոր կողմերը, առանց լեզվի տիրապետման հնարավոր չէ իրականացնել ոչ մի մտավոր գործողություն»: Այդպիսի կապերի առկայությունն անհերքելի է: Նույն հայեցակարգում ասվում է. «Հանրակրթության համակարգում մայրենի լեզուն առանձնահատուկ տեղ ունի՝ մի կողմից որպես ճանաչողական, անձի ձևավորման, նրա մտավոր առաջընթացի, հոգեբանական գործընթացների՝ ուշադրության, հիշողության, երևակայության տրամաբանական և պատակերավոր մտածողության զարգացման հիմնական միջոց, մյուս կողմից՝ ուսումնական մնացած բոլոր առարկաների ընկալման ու յուրացման նախադրյալ»[14]:

Մայրենիով ձևավորված միջառարկայական շղթայում հաստատվում է բոլոր առարկաների փոխադարձ կապը, քանի որ լեզուն ցանկացած առարկայից գիտելիքների ձեռքբերման համար անհրաժեշտ գործիքն է:

«Մայրենի – այլ առարկաներ» շղթայում այս կապը հաստատվում է ոչ այնքան լեզվի, որքան այլ առարկաների ուսուցման տեսանկյունից, քանի որ լեզուն ցանկացած առարկայից գիտելիքների ձեռքբերման հիմնաքարն է[15]:

Խոսքի զարգացմանը մեծապես կարող են նպաստել լեզվական գիտելիքների հիման վրա աշակերտների խոսքի ոճական-քերականական հարստացումը, խոսքը լսելու և հարկ եղած դեպքում բանավիճելու կարողության զարգացումը, լսած նյութից խոսքի գլխավոր միտքն առանձնացնելը իրավիճակին համապատասխան ոչ ծավալուն խոսք կառուցելու, սկիզբը կամ ավարտը հորինելու կարողությունների մշակում:

---

[14] Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ, 2013, 34 էջ:

[15] Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ, 2011, 3 էջ:

Խոսքի զարգացմանն ուղղված բոլոր աշխատանքները հետապնդում են մեկ նպատակ՝ զարգացնել և հարստացնել աշակերտի բառապաշարը, ընդարձակել մտահորիզոնը, ձևավորել բարոյական վարքագիծ, իսկ սերնդի կրթության և դաստիարակության գործընթացը իրականացվում է հանրակրթական դպրոցում:

Խոսքն առանձնահատուկ նշանակություն ունի ինչպես միջանձնային հաղորդակցման, այնպես էլ սովորողի անձի ձևավորման ու զարգացման գործընթացում: Հարուստ և դիպուկ խոսքն օգնում է կառուցողական հարաբերություններ ստեղծել շրջապատում, ձևավորում է սեփական կարծիք ունենալու հմտություն, կարողանում է լուծել բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք հատկապես հաղթահարվում են միջառարկայական ուսուցման համատեքստում:

Ուսուցման գործընթացին բնորոշ է կառավարվող լինելու հանգամանքը, և բնական է, որ ակտիվ ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել անհատի առանձնահատկությունները, այսինքն՝ յուրաքանչյուր աշակերտի մտածողության, հիշողության նույնիսկ առանձին զգայարանների (տեսողություն, լսողություն) առանձնահատկությունները, ինչպես նաև բնավորությունն ու կամքը:

Վերջին տասնամյակում ուսուցման բնույթի փոփոխությունները տեղի են ունենում գլոբալ կրթության միտումների համատեքստում, որոնք ստացել են «մեգա միտումներ» անվանումը [16] : ՀՀ–ում ժամանակակից դպրոցն իր ուսումնառության գործընթացը կազմակերպում է համաշխարհային դպրոցի փորձի ու նոր ձեռքբերումների հիման վրա:

Ուսուցումը և գիտելիքի յուրացումը պետք է իրականացնել ակտիվ հենքի վրա: Ջ. Դյուիի այն դրույթը, թե պետք է երեխաներին օգնել գիտելիքը ակտիվորեն յուրացնելու և ոչ թե նրան դարձնել պասիվ ընդունող, պատկերավոր ձևակերպել է Գ. Քոմենջերը. «Երեխան անոթ չէ, որը պետք է լցնել, այլ ջահ, որը պետք է վառել»[17] : Ուստի ուսումնական ծրագիրը չպիտի լինի անփոփոխ, այլ հասարակականմշակութային ոլորտներում շարժումները աղբյուր և խթան պետք է

[16] Մարգարյան Ս., Ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման մասին, «Մանկավարժ», 5-2010, էջ 176:

[17] Դյուի Ջ., Դպրոցն ու հասարակությունը, Երևան, 2013, էջ 76:

դառնան անընդհատ ընտրության և կրթության բովանդակության փոփոխության համար:

Ուսուցչին պիտի տալ ստեղծագործելու հնարավորություն, իսկ աշակերտի մոտ զարգացնել քննադատական մտածողություն, տրամաբանություն և ինքնուրույն բացահայտելու ձգտում[18]:

Իտալացի մանկագիր Ջանի Ռոդարին «Ստեղծագործական երևակայության քերականություն» գրքում մեջբերում է անում Նովալիսից. «Եթե ֆանտազիային այնպես տիրապետեինք, ինչպես տրամաբանությանը, հորինելու արվեստը կբացահայտվեր»[19]:

Մենք էլ կարծում ենք՝ եթե աշակերտի հետ աշխատելիս շեշտադրենք նրա երևակայության զարգացումը, ապշեցուցիչ գյուտերի կհանդիպենք, քանի որ նա ինքն է հաճախ զարմանում, թե ինչպես ծնվեց բառերով արտահայտված այդպիսի պատկեր:

«Սովորող – սովորող», «ուսուցիչ – սովորող» համագործակցության, միասին երևակայելու և պատկերացնելու արդյունքում ծնունդ են առնում հայտնագործություններ, որոնք թաքնված են մարդու ենթագիտակցության խորքում: Սա հեքիաթի և իրականությանհանդիպումնէ՝ բառերի կերպարանք առած:

Ժամանակակից ինտեգրված դասին ներկայացվող պահանջներն են՝

- նոր մեթոդների կիրառում,
- փոխազդեցություն, փոխուսուցում,
- աշակերտի ակտիվություն,
- համագործակցություն,
- ինքնաարտահայտման խրախուսում,
- հետադարձ կապ:

Կապակցված խոսքի զարգացումը տեղի է ունենում աստիճանաբար, մտածողության զարգացման շփման ձևերի բարդության հետ:

---

[18] Նույն տեղում, էջ 72:

[19] Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995, էջ 8:

Գործնական համատեքստ: Լեզվի թե՛ բանավոր, թե՛ գրավոր դրսևորումները կոչվում են խոսք, որը, ըստ էության, լեզվի կիրառությունն է գործնականում: Խոսքը մտածողության արգասիք է: Յուրաքանչյուր լեզու ունի իր արտասանությունը, որը ձեռք է բերվում և կուտակվում հասարակության զարգացման ընթացքում: Լեզուն յուրաքանչյուր ժողովրդի ազգային գիտակցության արտահայտման ձևն է: Հանրակրթության համակարգում լեզուն առանձնահատուկ տեղ ունի մի կողմից՝ որպես աշխարհահանաչողության, անձի ձևավորման, նրա մտավոր առաջընթացի, հոգեբանական կարգերի, ուշադրության, հիշողության, երևակայության, տրամաբանական և պատկերավոր մտածողության հիմնական միջոց, մյուս կողմից՝ որպես ուսումնական մնացած բոլոր առարկաների ընկալման և յուրացման նախադրյալ: Մայրենի լեզվով տարբեր ոճերի բնագրերի գիտակցական ընթերցումը և միտքը ազատորեն շարադրելու կարողությունը նպաստում են մյուս առարկաների ընկալման յուրացմանն ու նպատակային վերարտադրմանը[20]:

Բայասեռի քերականական կարգի ուսուցումն ունի հաղորդակցական հմտություններ ձևավորելու նպատակ, քանի որ «սեռանիշ մասնիկները ծառայում են հաղորդակցման պլանին»՝ արտահայտելով եղելության (գործողության) հեղինակի օտարումը եղելությունից (գործողությունից): Սեռի քերականական կարգի դասավանդումը նախընտրում ենք կատարել ջահուկյանական հարցադրումներով.

1. Հաղորդողը ի՞նչն է առաջ մղում առաջին պլանի վրա:
2. Ի՞նչ չափով է տեղյակ հաղորդվող գործողության կողմերին:

Սեռի քերականական կարգը հայերենում արտահայտվում է եռանդամ հակադրությամբ՝ ներգործականություն, կրավորականություն և չեզոքայնություն: Ներգործական և չեզոք սեռերի դեպքում իմացական և հաղորդակցային պլանների միջև սովորաբար հակասություններ չեն լինում. ներգործական սեռի բայերն արտահայտում են գործողայնություն, իսկ չեզոք սեռի բայերը՝ վիճակայնություն, իսկ

[20] Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ, 2011, էջ 3:

կրավորական սեռի բայերը՝ կրավորականություն, որի դեպքում բայահիմքի նշած գործողությունը կամ եղելությունը օտարվում է հաղորդման ենթակայից և ուշադրության կենտրոնում է հայտնվում ներգործվողը՝ դառնալով հաղորդման ելակետ: Այս դեպքում բայահիմքի նշանակած գործողության կատարողը ենթական չէ, այլ մեկ ուրիշը, որ խոսքի մեջ կարող է չնշվել[21]:

Սեռի բերականական կարգը ժամանակակից դասագրքերում ուսուցանվում է 7- րդ դասարանում՝ «Բայ» թեմայի շրջանակներում: Նկատենք, սակայն, որ սեռի մասին նախագիտելիքներ աշակերտներին հաղորդվում են «Գոյական» թեմայի «Հայցական հոլով» ենթաթեմայի շրջանակներում, որտեղ աշակերտները անձնանիշ և իրանիշ առարկաների փոխակերպման միջոցով տարբերակում են հայցական հոլովը տրական և ուղղական հոլովներից: Այնուհետև «Բայի սեռը» թեմայի շրջանակներում անդրադառնում են ներգործական սեռի բայերի լրացումառությանը, որ արտահայտվում է հայցական հոլովով՝ պատասխանելով «ո՞ւմ» կամ «ի՞նչ» հարցերին: Այստեղ անվանվում է շարահյուսական գործառույթ ունեցող երկրորդական անդամը՝ ուղիղ խնդիրը, որի իմաստային առանձնահատկություններն արդեն դասավանդվում են 8-րդ դասարանում:

Կարևորելով միջառարկայական կապերը՝ առաջարկում եմ սեռի բերականական կարգի դասավանդման ժամանակ վերլուծել այլ դասագրքերից մեջբերված արտահայտություններ:

Սույն աշխատանքում կփորձեմ ներկայացնել բայասեռի ուսուցման առանձնահատկությունը՝ «Ֆիզիկա» դասընթացի լեզվաշխարհն ուսումնասիրելով:

Ֆիզիկական երևույթները հիմնականում գործողություն նշանակող բառեր են, որոնց իմաստի բացահայտման արդյունքում պարզ են դառնում դրանց կիրառական առանձնահատկությունները: Կիրառելով ուսումնառության պարբերական մոդելի եռաստիճան համակարգը՝ աշակերտներին առաջին աստիճանում հանձնարարում ենք նպատակայնորեն ուսումնասիրել «Ֆիզիկա» դասընթացի նյութերը՝ դուրս գրելով գործողություն ցույց տվող բառերը և դրանց կապակցված առարկաներն ու երևույթները: Այսպիսով, աշակերտները, կարդալով «Ֆիզիկայի ուսումնասիրման առարկան: Ֆիզիկական երևույթներ» թեման՝ դուրս են գրում բայեր, պարզում դրանց

[21] Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 266-269:

կապակցելիական հնարավորությունները և արդյունքներին համապատասխան կազմում են «Բայասեռ» աղյուսակը.

Բայասեռ		
Ներգործական	Կրավորական	Զեզոք
Բնությունն այն ամենի ամբողջությունն է, ինչը շրջապատում է մարդուն՝ ջուրը, օդը, հողը, ծառերը, կենդանիները, աստղերը, մոլորակները: Ժամանակակից ֆիզիկան ուսումնասիրում է միայն ֆիզիկական երևույթները: Ֆիզիկայի գլխավոր խնդիրն այն է, որ հայտնաբերի բնության մեջ տեղի ունեցող տարբեր ֆիզիկական երևույթները միմյանց	Դրանցից մի քանիսի անվանումները և թե ինչի մասին են այդ գիտությունները բերված են հետևյալ աղյուսակում: Դրանց (Ֆիզիկական երևույթների) շարքին դասվող երևույթները և այդ երևույթների որոշ օրինակներ բերված են ստորև: Ապացուցված է, որ Արեգակնային համակարգի կենտրոնի շուրջը մոլորակների	Մարդն ապրում է բնության մեջ: Բնության մեջ մշտապես տեղի են ունենում բազմազան փոփոխություններ: Երկնակամարում Արեգակը և Լուսինը փոխում են իրենց դիրքերը, մթնոլորտում քամիներ են առաջանում: Երկնակամարում հյուսիսափայլ է հայտնվում, սերմը ծլարձակում է, երկաթը
կապող օրենքները, բացահայտի երևույթների կապերն ու պատճառները:	պտույտի պատճառն Արեգակի ձգողությունն է:	ժանգոտվում է, ջրվեժից գետի ջուրը հերթև է թափվում: Ամեն մի պատճառի համապատասխանում է որոշակի հետևանք:

Կատարվում է հայտնագործում, աշակերտները բերված օրինակների հիման վրա ներկայացնում են, թե ինչ են ցույց տալիս համապատասխան սեռային իմաստներով բայերը:

Երկրորդ աստիճանում կատարվում է «Գաղափարի ներմուծում»: Այստեղ կենտրոնանում ենք աշակերտների հարցերի վրա՝ ապահովելով դրանց առնչվող նոր բառերի յուրացումը՝ ֆիզիկայի ուսուցչի հետ կատարելով լաբորատոր փորձեր: Փորձերի բացատրությունների ժամանակ ուշադրություն ենք դարձնում այն գործողություններին, որոնք պետք է կատարել, ապա անդրադառնում ենք դրանց իմաստներին և հայտնաբերում դրանց սեռային պատկանելությունը:

Երրորդ աստիճանում արդեն կատարվում է «Գաղափարի կիրառում» և աշակերտներն աշխատում են նոր խնդրի վրա՝ փորձելով նորովի մոտենալ նախկինում ճնարկված գաղափարներին[22]:

Ամփոփում

Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում, որ «Ֆիզիկա» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում է «շարժում» հասկացությունը, որ անմիջականորեն առնչվում է լեզվաբանական «բայ» հասկացությանը: Լեզվաբանության մեջ բայերը համարվում են հատկանիշ արտահայտող բառեր՝ ելնելով դրանց ֆիզիկական սահմանումից. «Շարժումը մատերիայի գլխավոր հատկանիշն է» նախադասության վերլուծության միջոցով աշակերտները շարահյուսական վերլուծության են ենթարկում արտահայտությունը՝ պարզելով, որ «շարժում» ենթակային է վերագրվել «հատկանիշ» ստորոգելին «է» հանգույցի միջոցով: Եզրակացությունը պարզ է. «Շարժումը հատկանիշ է»: Բայերը ցույց են տալիս շարժում, որը մաթեմատիկորեն արտահայտվում է հետևյալ բանաձևով. a=b=c a=c: Ֆիզիկա դասընթացի ժամանակ կարևորվում է շարժման հետագիծը և ինչպես լինելը, որոնք բերականական արտահայտություններում կոչվում են տեղի և ձևի պարագաներ:

Ֆիզիկա դասընթացի ժամանակ կարևորվում է շարժման հետագիծը և ինչպես լինելը, որոնք բերականական արտահայտություններում կոչվում են տեղի և ձևի պարագաներ: Այստեղ հետաքրքիր է այն հանգամանքը, որ առօրյա խոսքում ձևի պարագան՝ որպես նախադասության պարտադիր անդամ, չի գիտակցվում և համարվում է լրացուցիչ տեղեկություն, առանց որի հնարավոր է խոսք արտահայտել: Այլ է խնդիրը «Ֆիզիկա» դասընթացում, յուրաքանչյուր փորձի ժամանակ կարևոր է կատարվող գործողությունների ձևի բացահայտումը, որից հաճախ կախված է լինում խնդրի լուծումը: Ֆիզիկական երևույթների տեսակետից կարևոր է նաև պատճառի իրողությունը, մի դեպքում, երբ կարևոր է պատճառի բնությունը, կատարվում է մեխանիկական շարժման բացահայտում, մյուս դեպքում մարմինների շարժման վերաբերյալ ուսումնասիրությունները կատարվում են առանց պատճառների բնութագրման, որ կոչվում է «կինեմատիկա»:

[22] Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան,

2004, էջ 63:

Շարունակելով բայասեռի բերականական կարգի ուսումնասիրությունները՝ աշակերտները հայտնաբերեցին, որ ֆիզիկական երևույթները հիմնականում գործողություն արտահայտող բառեր են, որոնք նույնպես բնութագրվում են այս կամ այն սեռին պատկանելու հատկանիշով, ինչպես՝ կլանել, արտանետել, ցրել, ծալել, բախել, շեղել գործողությունները ներգործական սեռի են, իսկ կպչել, պայթել, գոլորշիանալ բայերը՝ չեզոք, խորտակվել, թրջվել բայերը՝ կրավորական: Այստեղ նույնպես հանդիպում են բազմիմաստ բայեր, որոնք տարբեր արտահայտություններում ունեն տարբեր սեռային պատկանելություններ, ինչպես՝ պտտվել բայը:

Միջառարկայական կապերով ուսուցման գործընթացում աշակերտները ձեռք են բերում հաղորդակցական կարողություններ և հմտություններ: Նրանք տիրապետում են բառերի ճիշտ ընտրությանը՝ դրանք գործածելով տեղին, հասկանում են տարբեր բնույթի և ժանրերի բնագրերի բովանդակությունը, որոնք խոսքային տարբեր միջավայրերում տարբեր կերպ են վերարտադրվում:

Միջառարկայական դասի ժամանակ մեկ թեմայի շուրջ տարվող քննարկումները, զրույցը, խաղերն ու վարժությունները աշակերտին օգնում են լինել ակտիվ, զգոն, ուշադիր և ամենակարևորը՝ բացահայտող: Պարբերաբար անցկացվող միջառարկայական դասերն առավելապես նպաստում են աշակերտի խոսքի զարգացմանը՝ ձևավորելով համեմատելու, ընդհանրացնելու և եզրակացնելու կարողություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան, 1973:
2. Աթալյան Հ., Կապակցված խոսքի ուսուցման համակարգը,Երևան,1986:
3. Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա. և այլք, Ինտեգրված թեմատիկ միավորներ, Երևան, 2003:
4. Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2007:
5. Դյուի Ջ., Դպրոցն ու հասարակությունը, Երևան, 2013:
6. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ, 2013:
7. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004:
8. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ, 2011:
9. Մարգարյան Ս., Ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման մասին, «Մանկավարժ», 5-2010:.
10. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
11. Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության բերկանություն, Երևան, 1995: